


ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

հուշարձանի համար  
Տարեկան 10 Պր.  
վեցամսեայ 5 »  
Արսասանմանի հա-  
մար տարեկան 12 »  
վեցամսեայ 6 »  
ԿԱՆՏՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
—(—  
Կրտսիւնի և չնև տուր  
—(—  
Դանուցումն տղր 20 սան-  
քիւն է. Լրեխն աւելի աւ-  
գանկեալու համար 20 Օլօ  
գեղջ կըլուայ :




Կանախ և Կրտսի Կրկնի  
Խմբագրութեան հասցիին

—  
Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՐԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)



### ԱՆՃԻՄՆ ԶԷ

60-ական թվերին բարձրացաւ Գամառ-Քաթիպայի ձայնը, որ երգում էր տաճկահայի ազատութիւնը:

Նրան յաջորդեց Ռաֆֆու ահեղ հրատեղը՝ յեղափոխական վեպ-ժրագիրներով:

Այս գրողներն ստեղծեցին մի գարոց, մանր ու խոշոր հետեւողներին մի ամբողջ բանակ:

Նրանց զբաղեցրին առասպելական արագութեամբ ապրածուեցան, թափանցեցին թէ՛ մեծատան ճոխ ապարանքը, թէ՛ գեղջուկի մերկ խրճիթը:

Ամէնքը կարգում, ամէնքը ցնցում, ոգեւորում էին:

Ողբերութիւնը վարակիչ է. էլէքտրական հոսանքի նման նա թռչում է ամբողջ մի ծայրից միւսը, բոլորին մագնիսացնում:

Վարակեցաւ նախ Ռուսահայը, համեմատաբար աւելի լատ. պոյ-մաններին մէջ լինելու պատճառով:

Ճասնեակ հազարներով «Խէնթ» «Ջալալէտտին», «Կայծեր», «Ազատ Երգեր» եւ այլ գրութիւններ հեղեղեցին ու վարակեցին կովկասի հայութիւնը:

Ռուսահայը ցնցեց:

Նա զգաց, որ «պէտք է ազատութեան ձգտիլ»:

Բայց ռուսական ահեղ ուժի առաջ առ այժմ ամէն ազատագրական գաղափար օգն է ցնդում սապնի պղպձակի նման...

Ազատ միտքը քաղաքական սահմաններ չի ճանաչում:

Նա ճեղքում, անցնում է մարդկային բանապետութեան գծերը:

Նա թռչում է գետերով ու լեռներով, կապոյտ ծովերով ու մութ ձորերով:

Նա գնում է այնտե՛ղ, ուր իր համար «յարմար հող» է գտնուել Եւ մտաւ աշատասէր օգին Տաճկահայաստան:

Հողն արդէն պտտրատ էր:

Տաճկահայ լուսամիտ գործիչներն արդէն բաւական գործ տեսել էին...

Սուլթանական բռնակալութիւնը հիմքից կործանել էր տաճկահայի տնտեսութիւնը. քչել էր նրան «սովի» դուռը:

Երբ անօթի ու բռնաբարտած տաճկահայը ազատութեան գաղափարի հոսանք առաւ՝ մի անգամից պարզեց նրա համար «առայտ»ի վիճակի խողային ծանրութիւնը:

Ռուսահայը ձեռք մեկնեց նրան, օգնութեան եկաւ:

Կազմակերպեց ու գործի ձեռնարկեց հայ յեղափոխութիւնը:

Ձեռքը բազմաթիւ են, անվերջ... բայց անցած ճանապարհն էլ փոքր տարածութիւն չէ:

Ինչո՞ւ շարժեց ռուսահայը:

Ինչո՞ւ նա մտածեց տաճկահայի մասին, նրա համար գործի ձեռնարկեց:

Ինչո՞ւ նա այս օր էլ տասնապատիկ աւելի եււանդով շարունակում է աշխատիլ:

«Թշուառ եղբորը» օգնութեան համեմատ գաղափարն ա՛յլ քան չէր կարող ցնցել նրան:

Առհասարակ գաղափարը, եթէ նա չուներ կենսական խոր հիմքեր՝ չի կարող առաջացնել ամբողջ մէջ այդպիսի մեծ ու զօրեղ շարժում:

Ռուսահայն ապրում էր, ունենալով պատիւ, ստացածքի և կեանքի ապահովութիւն, վայելելով օրէնքի առաջ փոքրի շատէ հաւատար իրաւունք:

Որքան ի՞նչն ստիպեց նրան զոհել իր որդիներին լուսագոյններին, թափել այդ քան ջանքեր, առ այդ քան նիւթական գոհուցութիւններ...

Կրկնում ենք՝ միայն գաղափարը, գրքերից՝ քաղաք չոր ու ցամաք գաղափարը, առանց կենսական լուրջ հիմքերի՝ չէր կարող նրան սգեւորել մինչև այդ աստիճան:

Կենսական հիմքեր կան:

Այդ հիմքերը շա՛տ շատերի համար մինչև վերջին տասնեակ տարին՝ անհասկանալի, մութ ու խուսար էին:

Ռուսական քաղաքականութեան օր աւուր աւելի խիստ ձեռքաւ-

րանք ընդունող «հայկեր» բնաւորութիւնը պարզ ու սրոշ գոյն ստացաւ 1880 թւից յետոյ:

Նախ սահմանափակեցին հայ դպրոցների ծրագիրը:

Ապա դպրոցները բոլորովին փակեցին:

Սրան յաջորդեց «դպրոցական կարած» անուան սպի բաւական թւով եկեղեցական գոյքերի աւազակային իւրացումը:

Հայ մամուլի գրաքննութիւնը կատարեալ սուլթանական է:

«Երձագանգ» թերթը կառավարութեան կողմից խափանեցաւ:

Անհամբեր սպասում է մի սթերթերի և մի քանի օգտակար ընկերութիւնների փակումը:

Հայ աստիճանաւորը, բժիշկն ու զինւորականը, երկրաչափն ու ճարտարագէտը, ուսուցիչն ու քիմիկոսը կովկասի մէջ պետական պաշտօններից հալածոււմ են:

Կատարեալ որսորդութիւն է տիրում կովկասում... միայն որսը հայն է, որսորդը թթու ռուս իշխանաւորը:

Հայերի գրութիւնն այժմ այն է կովկասում, ինչ էր երբեմն Լեհացիները գրութիւնը Լեհաստանում:

Առաջ այս բոլոր հայակեր ձեռք-տունները մութ, անորոշ էին:

Գամառ-Քաթիպան, Ռաֆֆին ստիպեցին էին: Նրանք նկատեցին հատարակ անհատի համար աննկատելի և քարոզչի «աշխատիլ տաճկահայի փրկութեան համար»:

Այս օր ամէն մի խելքը գլխին ռուսահայ պարզ ըմբռնում է, որ առանց Տաճկահայաստանի ազատութեան՝ ռուսահայը կորչելու է իբր աղբ, կլանելու է ռուսական խուսար ու կիսակիրթ բռնակալութեան ծովի մէջ:

Աւելի՛ ևս. ռուսահայն զգում է, որ ամբողջ հայութիւնը պէտք է կորչի, տարրալուծւի, եթէ Տաճկահայաստանի փրկութեան գործը գլուխ չգայ:

Տաճկահայաստանի գործը հայութեան վերածնութեան գործն

է. և ռուսահայն աշխատում է այդ գործի համար:

Ազատ, իբր աղբ, ազատ իբր մարդ—ահա ներկայ հայութեան մաքուր մասն իշխանաբանը:

Եւ ռուսահայը ձգտում է այդ բանին

ԳԱՍՊԱՐ

---

ԱՒԱՆԴԱՍՏՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՍԷՋ

Շար. Ասխորդ քիւն և վերջ Գ.

Շարագրութեան համար տրուած նիւթերը յաճախ տղուն մտաւոր ու հոգեկան կարողութեանց զարգացման աստիճանին չեն համապատասխաներ. ատկէ զատ՝ ուսուցիչները հարցերու միջոցաւ առանց նախապէս նիւթին գլխաւոր զազափարնիւր աշակերտներուն գտնել աւելու, առանց ընդլայնումները կարգալով բացատրելու, կը ստիպին որ անոնք ստիպուին ընդօրինակել իրենց խորհուրդները ու բացատրութեան ձեւերը:

Տղան այդպէս լաւ նմանող մը կը գտնուայ, առանց իր մտածելու եղանակն ու բացատրութեան ձեւերն ունենալու. անիկա ոճէ եւ անհատականութեան զուրկ արարած մը կըլայ իր ճշտող եւ ո՛չ թէ զարգացնող ուսուցիչին ձեռքին սակ:

Դպրոցական բոլոր գրաւոր պարտականութիւններու եւ հրահանգներու սրբագրութիւնը շատ անբաւարար եւ ապարդիւն եղանակաւ սեղի կուսնենայ: Դասատուն ինքն է որ կը սրբագրէ հրահանգները եւ կուսայ աշակերտին որ երբէք իր սխալները վրայ չնայիր ու անոնց պատճառները հասկնալու չհետամար: Սրբագրութիւնները, որպէսզի արդիւնաւոր ըլլան, պէտք է որ գաստարանի մէջ բոլոր աշակերտներու մասնակցութեամբ՝ նախ բերանացի եւ ապա գրաւոր կերպով կատարուի:

Մեր բազմաթիւ վարժարաններու մէջ գրաւոր պարտականութիւնները եւ տառերը ընդօրինակել ստալու սովորութիւնը չափազանցութեան հասած է. այնպէս որ եթէ աշակերտը վերջի վերջոյ ձանձրոնալով չծուլանայ, առաւօտէն մինչ երեկոյ գրաւոր աշխատութիւններով պարագելու կը ստիպուի: Անընդհատ անիկայ գիր կը գրէ ու սետրակներ կը լեցնէ ու չկրնար ծանօթութիւններ ու գաղափարներ սքանալ, որովհետեւ գրածները կարգալու, անոնց իմաստը հասկընալով իւրացնելու ոչ ժամանակ եւ ոչ ալ սովորութիւն ունի:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իրաւունքի 18 թիւին մէջ կարգացի «հրապարակային կեղծարարութիւն» վերնագրով, խմբագրութեան կողմէն գրուած, անստորագիր յօդուած մը որ Լեւոն Սարգիսեանի «Գրական կեղծարարները» վերտառութեամբ, Շարժումի մէջ գրածին զէմ պատասխան մըն էր:

Յօդուածին տակ մանր գրերով խմբագրական ծանօթութիւն մը գրուած էր զժբազդաբար՝ որ ամէն ողջամիտ մարդու վրայ, բնականաբար, շատ տխուր սպաւորութիւն մը թողուց, եւ որ խմբագիր պարտնի նկարագրին հանդէպ իր բարեկամներուն ունեցած ամենէն խորունկ հաւատքն անդամ կարող է խորատակել:

Իմ եւ իրաւունքի մէջ գեղութիւն ունեցող բարեկամութեան վրայ որքան ալ դուրսդուրամ, պէտք է բնութիւն վերին աստիճանի ուժգին եղաւ այն հարուածը, զոր կրից ունեցած մեծ համարումս:

Այդ խննդ սողերուն մէջ ամբողջ ճշմարտութիւն մը կար խեղճութեամբ եւ աղարտուած:

Այս պարագան կը թելադրէ զիս հրապարակով մէկ քանի զիտողութիւններ ընել՝ անկեղծօրէն:

Իրաւունքի խմբագրութիւնը բացարձակապէս զատապարտելի է երկու տեսակէտով:

Առաջին որ հրապարակագրի մը անհրաժեշտ պարկեշտութեան զէմ խստիւ մեղանշած էր, եւ երկրորդ որ, յայտնի համարձակ, սուտ կը խօսէր ճշմարտութեան մը մէջ յաղթող դուրս գալու անորակելի ամբարնաւածութեան մղուած:

Բացատրեմ.

1. Ինչ աստիճանի ալ հասած ըլլային իր յարաբերութիւնները Լեւոնի հետ, իրաւունք պարտաւոր էր որոշ սկզբունքները յարգել եւ իր թղթակցին անունը հրապարակ նետելու չափ չի ստորանալ: (\*)

Փափաքելի էր որ իրաւունքի ատանկ անախտ ընթացքով մը, բարեկամներու շրջանակի մը առջեւ նոր զէմքով, եւ ախտ, շատ պղծտիկցած երեւան չի գար վերջապէս:

2. Լեւոնի հետ ունեցած խզումէն յետոյ, զարձակ իրաւունք վհանձնութիւն ունենալու էր հակառակորդին առաւելութիւնները յարգելու: Մեզք, որ անձնական ազտու կիրքով մը մոլորուած, ստելու չափ գահովէ անկուծ մը կուսենայ:

Լեւոնը՝ ինչպէս շատ լաւ ստուգած եմ, երբէք մնայուն, թոշակաւոր վարձակաւ մը եղած չէ միլիոնէրի մէջ:

(\*) Իրաւունքի նոյն թիւին մէջ կը կարդանք, որ «Պետոյ հայ մամուլին զարդը կազմող հանրածանօթ գրագէտներէն երկու անձնաւորութիւններ բարեհաճած են իրենց աշխատակցութիւնը նուիրել իրաւունքի, անոնց մէկը ծածկանուծով, իսկ միւսը անստորագիր»... Ուրախ ենք, երեւակայինք, որ իրաւունքի խմբագրութեան եւ անոնց մէջն ալ թիւրիմացութիւն մը կամ զազափարի հակառակութիւն մը ծագեցաւ... է՛, ան ատեն... Ան ատեն երկու քնալ «ծակը երթալու» վտանգին մէջ պիտի ըլլան շնորհիւ վեհափառ Սուրբանին... ու հայ ազգն ալ պիտի կորսնցնէ իր փառաւոր զարդերէն երկուքը... Թէեւ չենք գիտեր թէ ի՞նչ զարդեր:

Օրական երկու ժամ, գրեթէ ճրիարար, դասախօսութիւն ընել յանձն առած է ու ապա ինքը, իր կամքով հրաժարական սուտ է, սուր կերպով բողոքելով միաժամանակ վարձաւանի վիճակին զէմ, որ իր համոզումով, «անբարոյականութեան», ծուլութեան, կոշտութեան եւ ամէն տեսակ մոլութեանց բոյն մը դարձած է, սպաննելով աշակերտներուն մէջ բարոյականի, կարգապահութեան եւ ուսման ամէն զգացում»:

Իրաւունք լաւ գիտէր որ Լեւոնը խախտուելիք զէրք մը չունէր քանի որ վարձակաւորութեանը բան մը չէր ակնկալեր, եւ արդէն գրեթէ իրեն յատուկ, ապահով զբաղումը ունէր Քէսեկեան եղբայրներուն մօտ, որոնք մինչեւ այս օր յարգանքով ու սիրով կապին իր հետ:

Ինծի չափ լաւ գիտէր զարձակ որ Լեւոնը անկեղծ է իր սեփական համոզումներուն մէջ՝ որոնք կրնան տարբեր ըլլալ մերկաներէն: Հետեւաբար քսամեղի է, թունալի մասինք մըն է պարզապէս, Լեւոնի զէմ փոխուած այն ձրի զրպարտութիւնը, թէ «հացի ինչորէն մղուած զինակից եղած է» ուրիշներուն:

Իրաւունքի էջերուն մէջ շատ անգամներ առիթ ունեցած ենք կրկնելու, թէ համոզումներու իրական տարբերութեանը ներքին է բաղխումներ ունենալ: Թէ ճշմարտութեան շահերու պաշտպանութեանը համար է որ ազնիւ մարդիկ կը զոհն են երբեմն մինչեւ իսկ բարեկամութեան կապուրդը եւ թէ ամենուս պարսէն և սախայն, անողորմ ընդհարումի մը վերջ իսկ, վեհանձն զճնուիլ, յոխապարձ առաւելութիւնները յարգել հե ամեն ստորին զեմք արեւմտեանը:

Կը վայել՝ որ նոյն թիւերին խմբագրութեան յայտարարութիւնները կեղծէ այդ ամենապարզ ճշմարտութիւնները եւ զանոնք շարաշար կոխկոսէ, ան ալ այնպիսի անձի մը զէմ, որուն աշխատակցութեամբը գեռ քիչ ժամանակ առաջ հպարտ էր իրաւունքի Մեզք:

Վահան Շահիրեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւ-Եորք, 5 Մարտ

Նիւ-Եորքի ամենէն շքեղազարդ, ամենէն ընդարձակ թատրոն-սրահներէն մէկուն մէջ, մարտ 4ի գիշերը հայ երիտասարդներու եռանդուն խումբ մը ներկայացուց Մեծն Ներսէս» ողբերգութիւնը ի նպաստ սովատանջ Ձէյթունին:

Գերակատարի գերը զրկեց զիս սակայն թղթակից-հանդիսատեսի դերէն, հետեւաբար ներկայացուցի յաջողութեան մասին գրեկոյս կը քաղեմ հանդիսականներու յայտարարութիւններէն, որոնք բոլորը կը միանան սա կէտին վրայ թէ, Միացեալ Նահանգաց հայ դադութիւններուն մէջ այնքան քիչ թիւերով թիւներ ունեցող եւ գրեթէ յաջող ու կատարեալ ներկայացում մը արուած չէր: Իւրաքանչիւր գերակացու, յաջողութեամբ կատարեց իր մասը: Ուստի ուրախ ենք թէ բուսական կուրիկ գումար մը Ձէյթուն կրնալ զրկելու համար եւ թէ նորակազմ գերասանական խմբին անդրանիկ փորձերու յաջողութեանը մասին: Հրապարակային ընդհ. եւ կուսակցական ժողովներ, յարաններ սարքուած մէջ շատ վարպետ էին մանաւանդ Նիւ-Եորքի երիտասարդները ըստ երկնի գիշեր ապացուցուեցաւ թէ

ասոնք հայ բնիկ վրայ ալ շատ անձարակներ չեն:

Գաղափար հայ հարուստներու եւ պատուելիներու դասակարգը, քիչ բացառութեամբ, մինչեւ հիմակ մէկ սէնթ չէ նետած Ձէյթունցիներուն հացիգինի դանձանակին մէջ, ասոնց առարկութիւնն է, այսօր հայ վարդ հրապար...» ստոր համար էր որ երկնի գիշերուան ներկայացումին ներկայ չէին հայ հարուստները եւ անոնց վարձկանները: Նոյն իսկ Ձէյթունի նպաստամատոյց յանձնախմբին հարուստ անուանական անդամները, օգափոխութեան պատրուակաւ, շարքով մեկնեցան քաղաքէս: Գիշերը ներկայացումէն խօսապիւրա համար: Ձենք ցատիւր ասոնց բացակայութեանը համար, անվեհեր անօթի լեռնցիները նայինք կու գլխին այս թուլամորթներու ներկայութիւնը:

Բայց հակառակ տխուր և անձրեւոտ օդին, հակառակ հարուստներու բացակայութեան, բնորոշակ սրածը լեւի լեցում էր, հայուն պարզ, աղքատ ու զսրձաւոր զուտակներով:

Մտերւոյ քաղաքիս զրադայտնի վարչութիւնն ալ երկու կատակերով թիւները պիտի ներկայացնէ ի նպաստ գրողարար-ընկերացաւորին: Վարչութիւնը նկատելով որ երկնի գիշեր շատ լաւ չէր, որոյցած է ինքն ալ խնդարեալ եւ անոր համար իր յայտարարութեան մէջ «խնդարեալ գիշեր» կանուանէ ներկայացումի գիշերը:

Իրական խնդում կա՞յ մեզ համար, քանի որ մեր եղբայրները անգին հայրենիքին մէջ արեւելի ու արցունքի ծովերու մէջ կը լողան:

«Տիգրիս»ի նախորդ խմբագրութեան բացած քուէարկութիւնը Սարճեան Եպիսկոպոսը ուղիւ-չուզելու մասին, գոցեց նոյն թիւերի նոր խմբագրութիւնը: Հոս չի մտնանք յայտնելու որ այս առիթը զրոյր երկու ամիս անաջ արդէն հրաժարած ըլլալով նոյն թիւերի խմբագրական անդամակցութեան, անոր միւս անդամն ալ Տ. Հ. Էկիսեան ծախեց թիւերը Տ. Գ. Զիթեանին, Ամերիկայի նորակազմ հնչակեաններու պարագլուխին:

Քուէարկութեան արդիւնքն է, 320 քուէներ չեն ուզեր Հայրիկի նուիրակը, իսկ 42 քուէներ կուզեն զայն: Այս համեմատութեամբ Միացեալ Նահանգաց հայ դադութեանութիւնը ամենէն ազդու չենք ուզեր կրնէ Սրբազանին որ, սակայն, հեղորէն կը ժպտի քուէատուներու երեւելի, կարծես ըսելով. «Ձեր ուզել չուզելը, Ձեր մեծամասնութեան ձայնն ու քուէն ի՞նչ կարժէ, երբ Հայրիկ ուզող որ Ձեզ առաջնորդ ըլլամ. ու ես ալ կուզեմ ըրջալ:

Կը խնդրենք, զուք չէք կրնա՞ր խորհուրդ մը տալ մեզ Պուլկարիէն Սարճեանին խօսք հասկցնելու եղանակի մասին: Այս մարդը մենք բոնի չենք կրնալ զրկել, չէ՞մի որ հոս «զգա՞տ» երկիր է, Արքայապետ կրնալ մեզ ըսել, «զուք ազատ էք զիս չուզելու...» Ի՞նչ ընե՞ք:

Տարիներ առաջ, երբ Տիգրիսական երազը տեսան, որ ոչ Պատրիարքարանին կրնան խօսք հասկցնել որ ետ կանչէ Սրբանձառան Գարեգին Եպիսկոպոսը-վարդապետ այն ժամանակ-եւ ո՛չ ալ հայրսուրբը խաղա-

Թուաբանութիւնը շատ վերացական, կրնանք բնի բարբարոս եղանակաւ կաւանդուի: Թիւերու ծանօթութիւնը եւ չորս պարզ գործողութիւնները անոնց առարկաներու եւ դիւրուսոյց գործիքներու օժանդակութեան, անոնց մտաւոր երկար ու հիմնական վարժութիւններու կուսուցանեն: Աշակերտին թուաբանական վիճակարի հաշիւներ եւ արտաւոր խնդիրներ կառավարկուի՝ փոխանակ մտաւոր հիմնական վարժութիւններու եւ իրական կեանքէ անուած գործնական խնդիրներու, բուրդովին վերացական եւ անըմբռնելի կանոններ գոց ընել կը արուի, անոնց այդ կանոններու ոգին հասկցնելու: այսպէս թուաբանութեան դասերու միջոցաւ մեր տղոց դաստիարակութիւնը զօրանալու տեղ՝ կը տկարանայ եւ հեղձեակէ անորոշութեան կը մատնուի:

Պատմութեան, բարոյագիտութեան եւ կրօնքի դասերը բարոյական մարդը կազմելու նպատակ ունին, հետեւաբար պէտք է որ անոնք աշակերտին մտքն աւելի սրտին խօսին, փոխանակ չոր ու ցամաք կերպով անոր յիշողութիւնը ծանրաբեռնելու: Սակայն մեր մէջ այդ դասերը այնքան թուլ ու անկենդան կերպով կաւանդուին, որ բնաւ իրենց նպատակին չեն ծառայեր եւ գրեթէ բնաւ տղուն հայրենասիրական ու բարոյական զգացումները չեն գրգռեր ու զօրացներ:

Գիտութիւնները բնութեան նկարագրութիւնը եւ անոր օրէնքներուն ծանօթութիւնն են, եւ որպէս զի աշակերտը լաւ սորովի գիտութիւնները, պէտք է որ բնութիւնը ամենաբաւեղանակաւ ճանչնալ գիտնայ, այսինքն ուսուցիչը իրեն օժանդակ ունենալով ինքը անձամբ գիտէ, տեսնէ ու քննէ բնական երեւոյթները: Բայց մեր մէջ, ինչպէս ամէն ուսուցում, գիտութիւններն ալ աւանդական եղանակներով կաւանդուին: Աշակերտին գիտելու զննել չեն սորովեցներ, պարզ եւ դիւրին փորձերու միջոցաւ անոր չեն ծանօթացներ այն օրէնքները, որոնք արհեստներու հիմը կը կազմեն եւ կամ մեր առողջութիւնը պահպանելու գաղտնիքը կը պարզեն, այլ ամէն բան թուլակորէն գոց ընել կուտան:

Չեմ ուզեր այլ եւս օրինակները երկարել, հարեւանցի կերպով յիշատակածներս կը բաւեն ի՞նչ ապացուցանելու թէ՛ մեր վարժարաններու մէջ դեռ աւանդականութիւնը իր ամբողջ զօրութեամբ կիշիւէ եւ թէ՛ մեր զաւակներու կրթութեան ու դաստիարակութեան գործը դեռ հաստատ հիմերու վրայ գրուած չէ: Սակայն ժողովուրդը երեսուն տարիներէ ի վեր անագին զոհողութիւններ կրնէ ամէն տարի դպրոցներու պիւտձէն կը բարձրացնէ եւ վարժապետներու թիւը կը շատցնէ. ուրիշն ինչո՞ւ չի կրնար մեր ապագայ հայութիւնը կազմելու պաշտօն ունեցող հաստատութիւնները բարեկարգ ու կանոնաւոր վիճակի մը մէջ դնել: Պատճառը շատ որոշ է. նա չգիտէ ուսուցիչներու լաւ ընտրութիւն մը ընելու հետեւաբար հակառակ իր բոլոր զօհողութիւններուն՝ չկրնար իր զաւակները պէտք եղած կերպով կրթել ու դաստիարակել ալ:

Կ. ՊիՕն



10,000ը կրնան իրենց ապրուստը հոգալ, իսկ մնացեալ 90,000ը պէտք է ողորմութիւնով ապրին:

—Վերջապէս Արարչական Դեպարտմենտը կ'աւելցնէ իր օգնութիւնը 1,500 սակի մօտ գումար մը:

—Վանի կրօնափոխութեան մասին հակասական լուրեր կը տարածուին: Առաջնորդական տեղապահը կը գրէ թէ շատերը իրենց մայրենի եկեղեցին վերադարձած են, իսկ Կաթողիկոս պատրիարքարանը պաշտօնապէս կը յայտարարէ թէ ետ դարձողներ չիկան:

—Ամերիկացի և Գերման միսիօնարները, իրենց Տիգրանահերտի, Բալուի և Չուկուչի երեք որսանոցներուն փակուելէն ետքը չիբրեւ ոչ արտօնուածներ, առ այժմ իրենց որբերը տուններու մէջ զետեղել են, մինչև որ նորերը բանան:

Պատրիարքը խոտապեր է անոնց մարդասիրական ձեռնարկին արդեւ չի հանդիսանալ, եթէ այդ պատրուակով հայերը իրենց մայրենի եկեղեցիէն բաժնելու շտշխատին:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

#### Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Մակեդոնական շարժումներուն մասնակցողներէն մէկը քանիին նախաձեռնութեամբ մարտ 7ին Սօֆիայի մէջ սիթիինկ մը կայացրէ: Ճառերու հրատարակած են եղեր Պ. Իօվէֆ և Իօնկին Վլատիկին: Սակայն խօսելու վայրկեանը հասած միջոցին այդ պարտնները հրատարակած են խօսելէ: «Աւստօսիթի թերթը իր զժգոհութիւնը կը յայտնէ այդ մեթոման համար: Միթիինկին մասնակցած են 5-6000 հոգի: Միթիինկը տուած է հետեւեալ որոշումները:

1. Կը բողոքենք մեծ պետութեանց դէմ, որոնք ճնշում կը բանեցունեն պուլիար կառավարութեան վրայ, որ թոյլ չի տայ Պուլկարիոյ մէջ յօգուտ Մակեդոնիոյ եղած շարժումներու զօրանալուն:

2. Մակեդոնական բարձր կօմիտէն կը հրաւիրենք որ, իր ամբողջ ուժը չը թափէ քաղաքացիական ճամբաներով գործելուն վրայ, այլ իրական գործի սկսի հակառակ պարագային թող հրաժարի:

3. Կոչում կընենք ամբողջ աշխարհի լուսաւոր ու ազատասէր հասարակութիւններուն, որ իրենց ուժերու չափ պաշտպան հանդիսանան Մակեդոնական հարցին:

4. Ամէն յոյս բարձրէն կտրած ըլլալով՝ կը գտնանք որ զանգաղելու ժամը անցած է, և եթէ մեր ձայնը արձագանգ չգտնէ մարդկութեան մէջ՝ ան ատեն թող հասկնան «խաղաղութեան պաշտպան» ամէն պետութիւնները, որ մեր բողոքը Սուլթանի արխիւնոս «բէթիլին» դէմ կարծ ժամանակի մը մէջ կարողայտուի ամենափճուական ձևով մը՝ «անխնայ ապստամբութիւնով»:

Սօֆիայի թրքական դեսպանը միթիինկին նախընթաց օրը գիտեր է Պ. Կրէքօֆին և խնդրեր որ արդիւն միթիինկը, Կրէքօֆը պատասխաներ է որ միթիինկ կազմողները արժէք չունենցող անձեր են, ատոր համար ալ ուշադրութիւն դարձնելու չէ...

—Սօֆիայէն մարտ 10ին կը հեռագրեն «Թանիին», որ ցանկութիւն կայ լուծել նահանգային և համայնական խորհուրդները, որպէս զի նոր ընտրութիւններու ժամանակ Բատուլայօֆի կուսակցութեան թեկնածուները յաղթեն:

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն մարտ 11ին կը հեռագրեն «Թանիին», որ ռուս ուսանողական խառնակութիւններուն վերջ դնելու համար, կառավարութիւնը խոտապեր է ներել անկարգութիւններու ատեն ձերբակալուած կամ արտաքսուած ուսանողներուն:

Կը խոտաճայ կառավարութիւնը, բայց կրկին քանի մը տասնեակ երիտասարդներ կը դժբաղդացնէ, շատերու կեանքն ալ Սիբիրին կամ Պետրոս-Պօլոսեան բանտին մէջ կը խամրեցունէ...

—Մարտ 7ին Բրոնշդատ հասաւ ռուսական նորատիպ «սառոյց կտորոզ» նաւ մը: Այդ նաւը ինքնուրոյն և նոր ձեւ մը ունի. կը ճամբորդէ սառոյցներով ծածկուած ծովի վրայ, պատուելով մէկուէս մէթրօ հաստութեան սառոյցէ կեղեւը: Չնայելով այդ դժուարին պայմանին, նաւը կուսնէ ժամը 14 քիլօմէթր տարածութիւն և նախ պետք է ծրագրէրը հնարուն է նաւապետ Մաքարօֆը:

#### Թ Ո Ւ Ի Ր Ք Ի Ա

Սուրբ տեղերուն ծնրադրութեան գացող և Սուլթանի մտերմացոյն բարեկամ Վիլհէլմ կայսրը բարեհաճած է, իբր վերջաբան իր շնաշխարհիկ ու խտազնացութեան, Երուսաղէմի ամէն գաւառութեան պետերուն մէկ-մէկ շքանշան բաժնել: Այսպէս լատին պատրիարք Լիւտովիթօ Բիալին ստացեր է «Կարմիր-Արծաթ», իսկ հրէաներու մեծ ուսարուսպետը «Թագի» երկրորդ աստիճանի շքանշանները:

Շէն ու պայծառ մնայ Կայսեր

առասաններու թիւը... Ի հարկէ Հայոց պարիարքն ալ բան մը առած կը ըլլայ:

—Կ. Պօլսէն մարտ 8ին կը հեռագրեն «Թանիին», որ Սուլթանը իրատէ մը հանած է, որով վերջնականապէս կը հաստատէ Հայտարարչայի մէջ պահեստներ տալու խնդիրը փոքր Ասիոյ երկաթուղւոյ ընկերութեան, չնայելով Ֆրանսական զօրեղ դիմադրութեան:

Առ այժմ Ֆրանսական քարափներու ընկերութեան և ոչ մէկ փոխարինութիւն կը ըլլայ թուրքիոյ կողմէն, չնայելով Սուլթանի ըրած բացարձակ խոտման Ֆրանսական դեսպանին:

—Անգլիական Կալլի արքայազնը պէտք է Սթէնք գայ: «Թանիին» Պօլսէն կը հեռագրեն, որ Սուլթանը հրաւիրեր է Անգլիացի արքայորդուն այցելել նաև Պօլիս: Ասիկա շատերը կը դիտեն իբր տեսակ մը երախտագիտական ցոյց Սուլթանի կողմէն դէպի անգլիացիները, որ Կրէտէի թուրքերուն վերաբերմամբ ձեռնառու դիրք մը բռնած են, առնելով զանոնք իրենց հովանաւորութեան տակ:

Կսուրի նաև որ քանի մը տասնէ ետքը Կրէտէի երկրի սոսիլիսանըն ալ պէտք է Պօլիս գայ ողջունելու Սուլթանը իբր վեհապետ:

—Չմիւռնիայէն հասած լուրերը կը հաստատեն, որ հոն ապստանած 6,000 կրեացի թուրքեր, չըկուած ապրուստի ամէն միջոցներէն, յարձակած են յոյն և թուրք թաղերու վրայ և կողոպտած, շատ մը վիրաւորներ և սպաննուածներ կան:

#### Ա Մ Ե Ր Ի Ա

Միացեալ նահանգաց կառավարութիւնը որոշած է Ֆիլիպպական կղզիներու և Քուպաի տեղացիներէն կազմակերպել տեղական զինուորական զնդեր: Օտաիս և Պրոք ժէնէրալներուն յանձնուեցաւ, որ այդ զնդերը կազմեն ապստամբութեան մտանակցած տեղացիներէն: Պէռլինէն Լօքալ Անցայկէր լրագիրը կը հաղորդէ, որ Վաշինկթօնի կառավարութիւնը լուրջ դժուարութիւններու պիտի հանդիպի Ֆիլիպպական կղզիներու մէջ, քանի որ տեղացիք արդէն յայտարարած են, թէ ամերիկեան գրօշին չեն ուզեր հպատակիլ: Իսկ ինչ կը վերաբերի Քուպաին, հոն ամերիկացիներուն գործնաւելի յաջող է, քանի տեղացիները արդէն զգացեր են նոր կառավարութեան բարեբար ազդեղեցութիւնը:

#### Ֆ Ր Ա Մ Ս Ա

Մարտ 10ին Հոսթի Ֆրանսական, Անգլիական և Ռուսական դեսպանները, Բանէվարօ ծովափի հետ միատեղ խորհուրդը իրեն Կրէտական երկրի սոսիլիսանին 600,000 ֆր. փոխառութեան

խնդրին առթիւ: Ժողովականներու մեծամասնութիւնը նպաստաւոր կարծիքներ յայտնեցին:

—Ֆրանսաի և Անգլիաի մէջ վերջնական համաձայնութիւն մը կայացաւ Աֆրիքայի գաղթականութիւններու մասին:

### ՆՈՐ ԴԵՂԱՐԱՆ

Ս Տ Ե Ֆ Ա Ն Պ Օ Ր Ա Ճ Ի Է Ֆ Ի

«Ձար Պօրիս» փողոցը Գ. Սօթիթօֆի տան ներքեւի խանութին մէջ: Դեղերը թափ են. պատրաստութիւնը արագ: Կը փնտոէ նաև. օգնական մը և աշակերտ մը: 2-3

#### Ա Ձ Դ

Հածի Արթին Մուրատեան, խոհարար, և բուսական ստեղծակցի կերակուրներ գիտէ պատրաստել: Հասցէն Պապա Պապտեան սրճարան, քաղաքային պարտէզին դէմը, թիւ 3:

#### Ս Ի Կ Ա Ր Ի Թ Ո Ւ Ղ Ք Ի

Տիար Տիգրան Տոմաշեան կը ծուռացանէ թէ ի ֆ. Պոլիս Բուրշուն խանի դիմաց, կը վաճառէ Ազգ. շիւանդանոցի ամենէն բնասիր նոր տեսակ սիկարի թուղթէն, զիւզնայ դիւնիով մեծաքանակ և փոքրաքանակ: Բարեգործութիւնը և չափը զը պահանջեն որ ամէն հայ գործածէ զայն: Կան նաև Պօն, Վոլթօ և ուրիշ ամէն տեսակ թուղթեր: Յանձնարարութիւնը կը կատարուի ճշտաիւ և փութով: 9-10

#### Բ Ա Չ Ր Ա Վ Է Պ

#### Ա Մ Ս Ա Ք Ե Ր Ք

#### 57րդ Տարի

Տարեկան գին՝ 10 ֆր. — 4 բուկլի: — 2 Տորար:

Հասցէ Բէտաքսիոն ար ԷՄ ողվի Բազմալէպ. Ս. Լապար:

#### Վ Ե Ր Ի Ղ (Ի թ ա ի Բ)

#### Մ Ե Լ Ք Ի Ս Ե Գ Ե Կ Ե Պ Տ. Մ Ո Ւ Բ Ա Տ Ե Ա Ն Յ

Պատրիարքի Բրիտանական եկեղեցոյ ԿԱԼՈՅ

Տպարան «Անի» 1898

Գին 3.50 ֆրանք

Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պաշենց գրատան և Ֆօքշան (Ռուսմանիս) Վ. Մամիկոնեանի մօտ:

### Պ Օ Ր Ս Ա

Վառու 17 Մարտ

#### Պ Ո Ւ Ղ Տ Ա Յ

Վակօն, լիպրա 55-58, հէքթօլ 8.80-9.30 ֆրանք

Արապա, լիպրա 55-60 հէքթօլ 9-11.20 ֆրանք

#### Ա Ր Ր Ա

Լիպրա 42-50 հէքթօլ 6.10-6.40 ֆրանք

#### Մ Ի Ս Ի Ր

Վակօն, 55-57 լիպրա, 6-6.05

Առապա, 55-60 լիպրա, 6-6.20

Կիւնկէ 15-20 վակօն, 25-30 սոսպա կէմէքաէ տիր:

#### Տ Ա Ր Ը

Կիւնկէ 1½ արապա կէմէքաէ տիր 58-60 լիպրա, 5.40-5.80 ֆրանք

Առապա մուամէլէսի նարօլտն 21 ֆրանք հիսապը իլէ տիր:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна